ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ապրիլի 2025 թվականի N 514-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 718-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 718-Ն որոշման (այսուհետև՝ որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածում (այսուհետև՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) հավելվածի N 1.8 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. աղյուսակը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով՝

2.1	Ապահովված է դրանց առանձին տեսակների տարածքային մեկուսացումը	ՀՀ առողջապահության նախարարի 29.10.2009 թ.				0,5	Դիտողական	

«

	և անջատ պահպանումը առանձին մեկուսախցերում:	N 20-Ն հրամանի, հավելված, կետ 19							»,

բ. աղյուսակը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով՝

«

4.1	Վտանգավոր քիմիական թափոնների փոխադրումը կազմակերպությունից դուրս իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպության կողմից:	ՀՀ առողջապահության նախարարի 29.10.2009 թ. N 20-Ն հրամանի, հավելված, կետ 33				1	Դիտողական		»,

գ. աղյուսակի 5-րդ կետի՝ 5.3-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով, ինչպես նաև լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.4-րդ ենթակետով՝

«

5.4	բնակավայրերում:					0,5	Դիտողական		»,

դ. աղյուսակը 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին կետով՝

«

6.1	Ձրատար հորիզոն աղտոտման ներթափանցումը կանխելու նպատակով վտանգավոր քիմիական թափոնների կուտակման փոսորակի հատակը և պատերը հիդրոմեկուսացված են կավային, կավահողաբիտումային-բետոնային, ասֆալտաբետոնային, ասֆալտապոլիմերբետոնային նյութերով:	ՀՀ առողջապահության նախարարի 29.10.2009 թ. N 20-Ն հրամանի, հավելված, կետ 51				1	Դիտողական		».

2) հավելվածի N 1.12 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. աղյուսակի 8-րդ կետի «Հարց» սյունակից հանել «Արգելվում է տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղների կրկնակի փակելը կափարիչով և (կամ) ախտահանելը» բառերը,

բ. աղյուսակը 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով՝

«

8.1	Տարողությունների մեջ տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղները կրկնակի չեն փակվում և (կամ) չեն ախտահանվում:	ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008 թ. N 03-Ն հրամանի հավելված 1, կետ 21				3	Դիտողական	

».

3) հավելվածի N 1.17 ստուգաթերթի հարցաշարի՝

ա. աղյուսակի 69-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. աղյուսակի 67-րդ կետի «Հղում նորմատիվ իրավական ակտին» սյունակում «10» թիվը փոխարինել «110» թվով.

4) հավելվածի N 1.21 ստուգաթերթն ուժը կորցրած ճանաչել.

5) հավելվածի N 1.25 ստուգաթերթի հարցաշարի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՁԵՌՔԵՐԻ ՀԻԳԻԵՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ»:

2. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի N 1.3 ստուգաթերթը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ